2021թ. փետրվարի 5

ՀՀ ֆինանսների նախարար
Պարոն Ատոմ Ջանջուղազյանին
Մելիք-Ադամյան 1 փողոց
0010 Երևան, Հայաստան

Թեմա: Վարկ թիվ 3449-ARM՝ «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր»-փակման ամսաթվի երկարաձգում

Հարգելի պարոն Ջանջուղազյան,

1. Սույնով հղում ենք կատարում ֆինանսների նախարարության՝ վարկային համաձայնագրի փակման ժամկետի երկարաձգման վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 7-ով թվագրված դիմումին:
2. Ուրախ ենք տեղեկացնել, որ նշյալ վարկի առաջին երկարաձգումը՝ 2021թ. մայիսի 31-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը, հաստատվել է Ասիական զարգացման բանկի կողմից՝ չկատարված աշխատանքների իրականացումը դյուրացնելու նպատակով:
3. Ցանկանում ենք կանխավ շնորհակալություն հայտնել Կառավարությանը՝ վերանայված ժամկետում ծրագիրը հաջողությամբ ավարտելու նպատակով գործադրված ջանքերի համար:

Հարգանքով,

Դոնգ Սու-Պյո
Տնօրեն
Տրանսպորտի և հաղորդակցության բաժին
Կենտրոնական և Արևելյան Ասիայի վարչություն

Ասիական զարգացման բանկի
ԱՋԲ հայաստանյան գրասենյակի տնօրեն
Պարոն Պաոլո Սպանտիգատիին

Թեմա: Փոփոխություն «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (Վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրում

Հարգելի պարոն Սպանտիգատի,

Ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև շարունակական արդյունավետ համագործակցության համար:

Սույնով ցանկանում ենք տեղեկացնել, որ Ձեր՝ 2021թ. փետրվարի 5-ի նամակը և սույն պատասխան գրությունը կազմում են «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի փոփոխության համաձայնագիր, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ ԱՋԲ-ը գրավոր ծանուցում ստանա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընդունեք, խնդրում եմ, երախտիքիս հավաստիքը:

Հարգանքով,

Ատոմ Ջանջուղազյան

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը ՀՀ և ԱԶԲ միջև նախատեսվող «Փոփոխություն «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (Վարկ թիվ 3449-ARM) վարկային համաձայնագրում» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն